**С.А. КЮРЕГЯН, Н.К. МАНАСЯН**

## ВЛИЯНИЕ КРУТКИ И ИЗВИТОСТИ БИКОМПОНЕНТНЫХ ТЕКСТУРИРОВАННЫХ НИТЕЙ НА СВОЙСТВА ТКАНЕЙ

Представлены результаты исследования влияния основных параметров процесса подготовки бикомпонентных текстурированных нитей на их специфические свойства, а также данные, отражающие вопросы проектирования и выработки из этих нитей тканей рационального строения. В качестве объекта исследования выбраны текстурированные нити 15,6 *текс*, имеющие первоначальную крутку 10 *кр/м*.

***Ключевые слова:*** бикомпонентные текстурированные нити, термофиксация, усадка, структурные характеристики, коэффициент мягкости.

**S.A. KYUREGHYAN, N.K. MANASYAN**

## THE TWIST AND CRIMP IMPACT OF OF BICOMPONENT TEXTURIZED THREADS ON THE FABRIC PROPERTIES

The results of studying the influence of the main parameters of preparating the bicomponent complex threads on the manifestation of their specific properties, as well as the data reflecting the design and processing of these threads of rational structure fabrics are introduced. As the object of the study, complex filaments of 15.6 *tex* , having an initial twist of 10 *cr / m* are selected.

***Keywords:*** bicomponent complex yarns (BCY), heat-setting, shrinkage, structural characteristics, softness coefficient.

ՀՏԴ 332.1

**Ա.Գ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Ա.Բ. ԱՍԼԱՆՅԱՆ, Տ.Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ**

## ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՔՍՏԻԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ

***(Գյումրի)***

Քննարկվել են տեքստիլ ձեռնարկության արտադրության մրցունակության բարձրացման հարցեր՝ նորարարությունների հիման վրա, պայմանավորված տնտեսական ցուցանիշների փոփոխությամբ: Առաջարկված հանձնարարականները կարող են կիրառվել բիզնես միջավայրի նորարարական գործունեության ակտիվացման և ձեռնարկության մրցունակության մակարդակի բարձրացման նպատակով:

***Առանցկային բառեր.*** նորարարարություն, մրցունակություն, պահանջարկ, գին, արտադրության ծավալ, իրացման ծավալ:

Տարբեր տեսակի նորարարությունները տեքստիլ ձեռնարկության *մենեջմենթի, արտադրության, մարքեթինգի և ինֆորմատիկայի* ոլորտներում ուղղակիորեն կամ անուղղակի կերպով դրական ազդեցություն են ունենում արտադ-

ռանքի արտադրության և իրացման ծավալների, դրանց հետ կապված շահույթի, ծախքերի և գնի վրա, ինչն արտահայտվում է արտադրանքի պահանջարկի աճի, շահութաբերության և արդյունքում՝ մրցունակության ցուցանիշներում (նկ.1): Այդ փոփոխությունները, վերջին հաշվով, ապահովում են տեքստիլ ձեռնարկության շահույթի և շահութաբերության աճ:

Ռեսուրսային նորարարությունների իրականացման արդյունքում տեքստիլ ձեռնարկությունում կրճատվում են արտադրանքի միավորի վրա կատարվող փոփոխական նյութական ծախսումները: Սրանց կրճատումը կլարող է տեղի ունենալ նաև ապրանքային նորարարությունների արդյունքում: Աշխատավարձի գծով ծախսերը կրճատվում են տեխնոլոգիական և ապրանքային նորարարությունների շնորհիվ՝ արտադրանքի պատրաստման աշխատատարության կրճատման հաշվին [1]:




*Նկ. 1. Նորարարության ազդեցությունը տնտեսական ցուցանիշների և մրցունակության վրա*

Ծախքերի կրճատումը, այլ հավասար պայմաններում, ապահովում է արտադրանքի շահույթի և շահութաբերության ավելացում [2]: Բացի այդ, ծախքերի կրճատումը պայմաններ է ստեղծում գների իջեցման և արդյունավետ գնային մրցակցություն իրականացնելու համար (գնի և ծախքերի միջև մեծ տարբերությունը հնարավորություն է ստեղծում գնի փոփոխման համար): Գների իջեցումը հնարավոր է ոչ միայն արտադրության և իրացման ծախքերի կրճատման, այլև՝ արտադրանքի իրացման ուղիների կառուցվածքի պարզեցման միջոցով այդ ոլորտում նորարարությունների կիրառման հաշվին:

Շուկայական պայմաններում գների իջեցումը ապահովում է մի շարք լրացուցիչ էֆեկտներ [3]՝

1. գնային մրցակցության մակարդակի բարձրացում;
2. տնտեսական ցուցանիշների գծով մրցունակության համաթվի իջեցում, ինչը հանգեցնում է արտադրանքի նկատմամբ պահանջարկի և, համապատասխանաբար, իրացման ծավալի (ճկուն պահանջարկի պայմաններում) ու շահույթի ավելացման:

Հարկ է նշել, որ գնագոյացման ռազմավարությունը մշակելիս պետք է հաշվի առնել արտադրանքի նկատմամբ պահանջարկի գնային ճկունությունը: Ճ>1 ճկունության դեպքում գնի իջեցումը հանգեցնում է իրացման ծավալի և, հետևաբար, շահույթի ավելացման (նկ.2), քանի որ Ճ>1 դեպքում, $ԱԾ_1=Գ_1*Պ_1$, $ԱԾ_2=Գ_2*Պ_2$, $Գ_2<Գ_1$ և $ԻԾ_2>ԻԾ_1$:

Ճ<1 ճկունության դեպքում գնի իջեցումը նպատակահարմար չէ, քանի որ այդ դեպքում իրացման ծավալը կրճատվում է: Դա պայմանավորված է նրանով, որ Ճ<1դեպքում $ԱԾ'_1=Գ_1*Պ'_1$, $ԱԾ'_2=Գ_2*Պ'_2$, $Գ_1>Գ_2$ և $ԻԾ'_2<ԻԾ'_1$




*Նկ. 2. Իրացման ծավալի փոփոխությունը պահանջարկի տարբեր գնային ճկունության դեպքում*

Ձեռնարկության տնտեսական և շուկայական ցուցանիշների աճը ապահովում է ռեսուրսային, ապրանքային և տեխնոլոգիական նորարարությունները: Այսպես, նոր, բարձրորակ նյութերի օգտագործմանը կողմնորոշված նորարարությունները նպաստում են տեքստիլ արտադրանքի որակական բնութագրերի բարելավմանը: Արտադրանքի նորացումը և նոր արտադրատեսակների արտադրության յուրացումը նույնպես ապահովում են որակական ցուցանիշների մակարդակի

բարձրացում: Գործող տեխնոլոգիաների կատարելագործումը և առաջատար տեխնոլոգիաների կիրառումը հետապնդում է ոչ միայն արտադրության ծախքերի կրճատման, այլև, առաջին հերթին, արտադրանքի որակի բարձրացման նպատակ: Օրինակ՝ առաջադիմական տեխնոլոգիական գործընթացների կիրառումը նպաստում է արտադրանքի երկարակեցության, մաշադիմացկունության ավելացմանը և արտաքին տեսքի բարելավմանը: Ուստի արտադրանքի որակի բարձրացմանն ուղղված նորարարություններն ապահովում են շուկայական ցուցանիշների աճ, ինչպես նաև որոշ տնտեսական ցուցանիշների բարելավում (օրինակ՝ շահագործման ծախքերի կրճատում, շահութաբերության բարձրացում և այլն), ինչի արդյունքում տեղի է ունենում պահանջարկի աճ և արտադրանքի մրցունակության բարձրացում (նկ.3): Նկ. 3-ում պատկերված է պահանջարկի կորի փոփոխությունը՝ արտադրանքի մրցունակության մակարդակի աճի պայմաններում: Նախկին գնի դեպքում (Գ$_1$) պահանջարկն աճում է Պ$_1$-ից մինչև Պ$_2$: Ավելին, պահանջարկի նախկին Պ$_1$ մակարդակը կարող է պահպանվել գնի՝ մինչև Պ$_2$ մակարդակ բարձրանալու դեպքում: Պահանջարկի աճը հանգեցնում է վաճառքների ծավալի և շահութաբերության ավելացման:




*Նկ. 3. Արտադրանքի պանաջարկի և ձեռնարկության մրցունակության փոփոխությունը՝ կախված արտադրանքի գնից*

Հարկ է նշել, որ արտադրանքի որակի բարձրացումը կարող է ուղեկցվել արտադրության ծախքերի ավելացմամբ: Այդ դեպքում շահութաբերություն ապահովելու համար առաջանում է արտադրանքի գնի բարձրացման անհրաժեշտություն, ինչը միայն Ճ<1 պահանջարկի գնային ճկունության դեպքում կարող է հանգեցնել վաճառքի ծավալների ավելացման: Այդ պատճառով արտադրանքի

որակի բարձրացմանն ուղղված նորարարությունները մշակելիս անհրաժեշտ է գնահատել արտադրանքի մրցունակությունը՝ գնի հնարավոր բարձրացման հաշվառմամբ: Այդպիսով, նորարարությունները արտադրության արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոն են: Սակայն ներկայումս Հայաստանի տեքստիլ ձեռնարկությունների նորարարական գործունեության արդյունավետությունը ցածր է՝ նրանում մեթոդական և կազմակերպական բնույթի մի շարք թերությունների առկայության պատճառով:

Նորարարության բիզնես-պլանավորման մեթոդաբանություններում անհիմն կերպով բաց են թողնված դրանց նախագծային կենսացիկլի ձևավորման հարցերը: Ոչ բավարար ուշադրություն է հատկացվում արտադրանքի մրցունակության գնահատմանը. չկան շուկայում մրցակից բոլոր ապրանքների համալիր գնահատման պահանջներ: Այս հարցի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ ձեռնարկության և ամբողջ տնտեսության մրցունակությունը կախված է արտադրանքի մրցունակությունից: Բացակայում են նորարարության շահագործման ընթացքում բիզնես պլանի կատարման վերլուծության և հաշվառման, նրա ցուցանիշների, այդ թվում՝ արտադրանքի կենսացիկլի, մրցունակության, ներդրումների արդյունավետության և նախագծի անվնասաբերության օպերատիվ և նախագծային հաշվառման պահանջները: Այդպիսի հաշվարկների կարևորությունը որոշվում է ցուցանիշների անցանկալի փոփոխությունների վերացման ուղղությամբ միջոցառումների ժամանակին մշակման անհրաժեշտությամբ:

Ոչ բավարար է զարգացած բիզնես պլանավորման ծրագրային ապահովումը: Արդյունքում՝ ձեռնարկություններում բիզնես պլանների ձևավորման ժամանակ աշխատատար հաշվարկները կատարվում են ձեռքով, ինչը խոչընդոտում է դրանց բազմատարբերակ մշակման իրականացմանը:

Նորարարությունների արդյունավետության բարձրացումը կանխարգելող էական գործոններից մեկը գործուն նորարարական մեխանիզմի, և առաջին հերթին, նորարարական գործունեության զարգացած տեղեկատվական ապահովման բացակայությունն է:

Եվ վերջապես, ամենակարևոր կանխարգելող գործոնը տնտեսության ներկայիս վիճակի պայմաններում ձեռնարկություններում պահանջվող ներդրումների համար սեփական միջոցների անբավարարությունը, երկարաժամկետ վարկերի ստացման հետ կապված դժվարությունները, բարձր տոկոսադրույքները, արտոնյալ վարկավորման չնչին ծավալներն են:

Նշված թերությունների վերացումը կնպաստի նորարարությունների արդյունավետության բարձրացմանը:

Նորարարությունների բիզնես պլանավորման մեթոդաբանության կատարելագործման համար անհրաժեշտ է.

1. Նախատեսել նորարարության նախագծային կենսացիկլի ձևավորում, ապահովել նրա կատարման պարբերական վերահսկողություն և յուրաքանչյուր փուլում նրա ցուցանիշների բացասական փոփոխությունների վերացման գծով միջոցառումների մշակում:

2. Հաշվի առնելով ՀՀ տեքստիլ ձեռնարկությունների արտադրանքի մրցունակության բարձրացման խնդրի կարևորությունը, բիզնես պլանում անհրաժեշտ է առանձնացնել նորարարական արտադրանքի մրցունակության գծով հատուկ բաժին: Այնտեղ անհրաժեշտ է ներկայացնել շուկայում բոլոր վաճառողների արտադրանքի մրցունակության համալիր գնահատականը: Գնահատման մեթոդաբանությունը պետք է հաշվի առնի կոնկրետ շուկայի ու նրա սեկտորների յուրահատուկ պահանջները և նախասիրությունները:

3. Նախագծի շահագործման փուլերի համար ծախքերը կանխատեսելիս տարբերակված կարգով հաշվի առնել դրանց առանձին տարրերի սղաճը:

4. Ճշգրտել գնահատման ցուցանիշների ցանկը և դրանց որոշ մասի հաշվարկման մեթոդաբանությունը, այդ թվում՝ անհրաժեշտ է նախատեսել նախնական տվյալների փոփոխության հաշվարկը՝ նորարարությունների հատուցման այնպիսի ժամկետի ապահովման համար, որը չի գերազանցի վարկի մարման ժամկետը կամ սեփական ներդրումների հատուցման ժամկետները:

Նորարարական գործունեության արդյունավետության բարձրացմանը կնպաստի հետևյալ կազմակերպական հարցերի լուծումը.

1. Շահագործման ընթացքում բիզնես պլանի ցուցանիշների բացասական փոփոխությունները վերացնելու ուղղությամբ միջոցառումների ժամանակին մշակման համար անհրաժեշտ է կազմակերպել կենսացիկլի, մրցունակության, ներդրումների արդյունավետության և նախագծի անվնասաբերության ցուցանիշների օպերատիվ և նախագծային հաշվարկ, ինչպես նաև նախնական տվյալների կանխատեսում՝ այդ ցուցանիշների հաշվարկման համար:

2. Կիրառական համակարգչային ծրագրերի՝ համապատասխան համալիր փաթեթների ստեղծում:

3. Ներդրումների արտադրական ֆունկցիայի ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ ներդրումային միջավայր և արդյունավետ նորարարական մեխանիզմ՝ տեքստիլ ձեռնարկությունների նորարարական գործունեության կառավարման տարբեր մակարդակների գծով տվյալներ ներառող տեղեկատվական բազայի հիման վրա:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Царев В.В., Кантарович А.А., Черныш В.В**. Оценка конкурентоспособности предприятий (организаций). Теория и методология. — М.: Изд-во «Юнити», 2008. — 799 с.
2. **Анискин Ю.П.** Корпоративное управление инновационным развитием. — М.: Изд-во «Омега-Л», 2007. — 411 с.
3. **Быков В.А., Философова Т.Г.** Конкуренция. Инновации. Конкурентоспособность. — М.: Изд-во «Юнити», 2008. — 295 с.



**А.Г. СУКИАСЯН, А.Б. АСЛАНЯН, Т.А. СУКИАСЯН**


## ИННОВАЦИЯ КАК ВАЖНЕЙШЕЕ СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ТЕКСТИЛЬНОГО ПРЕДПРИЯТИЯ


Рассмотрены вопросы повышения конкурентоспособности производства текстильного предприятия на основе инноваций, обусловленных изменением экономических показателей. Предложенные рекомендации могут быть использованы в области стимулирования инновационной активности бизнес-среды и повышения уровня конкурентоспособности предприятия.



***Ключевые слова***: инновация, конкурентоспособность, спрос, цена, объем производства, объем реализации.



**A.G. SUKIASYAN, A.B. ASLANYAN, T.A. SUKIASYAN**


## INNOVATION AS THE MOST IMPORTANT MEANS OF ENSURING THE COMPETITIVENESS OF A TEXTILE ENTERPRISE


The issues on increasing the competitiveness of textile production on the basis of innovation due to changes in economic indicators are considered. The proposed recommendations can be used in the field of stimulating the innovative activity of the business environment and increasing the level of enterprise competitiveness.



***Keywords:*** innovation, competitiveness, demand, price, production volume, sales volume.